46. Êàìáàďÿí À. Ñ. Правомерность ограничения право граждан, содержащихся в местах лишения свободы, избирать в прецедентном праве Европейского суда // Российско-армянский (славянский) государственный университет, Годичная научная конференция. 28 ноября – 2 декабря 2007, Изд. РАУ, 2008.
47. Êàìáàďÿí À. Ñ., Погосян Т. Конституционно-правовые основы становления судебного прецедента в РА // Проблемы социальной ценности антикриминального законодательства, Материалы всероссийской научно-практической конференции (18 апреля 2008г.), ст. 106-111.

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ամիրխանյան Սամվել Գրիգորի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Դեկանի տեղակալ՝ Հերզոյան Սարիամ Նորիկի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ֆակուլտետի մասնագիտացումները և մասնագիտությունները

Դասիչ	Մասնագիտություն
0604	Ֆինանսներ և վարկ
0605	Հաշվ. հաշվառում և աուդիտ
0626	Բիզնեսի կազմակերպում

Մասնագիտացումներ՝ տնտեսագետի

Ուսանողների թիվը՝ 398
Շրջանավարտների թիվը՝ 134

**Քննաշրջանի արդյունքները
Ձմեռային քննաշրջան**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ և վարկ 1-ին	39	2	1	94.9
2-րդ	29	8	8	72.4
3-րդ	34	12	9	64.7
4-րդ	29	14	3	51.7
Հաշվ. հաշվառում և աուդիտ				
1-ին	28	14	1	50.0
2-րդ	19	9	1	52.6
3-րդ	28	13	1	53.6
4-րդ	24	9	6	53.8
Բիզնեսի կազմակերպում				
1-ին	32	15	1	53.1
2-րդ	18	3	5	83.3
3-րդ	29	16	4	41.4
4-րդ	19	3	4	78.9
Ընդամենը	328	118	44	63.1
Հնգամյա ուսուցում				
Ֆինանսներ և վարկ 5-րդ	36	10	5	66.7
Հաշվ. հաշվառում և աուդիտ 5-րդ	33	14	3	54.5
Ընդամենը	69	24	8	60.9

Ամառային քննաշրջան

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ և վարկ 1-ին	43	7	1	83.7
2-րդ	29	8	4	69.0
3-րդ	34	7	9	76.5
Հաշվ. հաշվառում և աուդիտ 1-ին	28	15	-	39.3
2-րդ	19	3	6	68.4
3-րդ	29	5	1	81.5
Բիզնեսի կազմակերպում 1-ին	32	16	2	50.0
2-րդ	18	3	6	83.3
3-րդ	29	14	8	51.7
Ընդամենը	261	81	34	67.2

2006/2007 ուս տարում հրատարակվել են

Դասագիրք	Մեծագրություն	Ռիսունակական ծեռնարկ	Ռիսունամեթոդական ծեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
		4		16	

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3

Ֆինանսներ և վարկ ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Գարաբյան Գրիգոր Սուրենի, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Մովսեսյան Դավիթ Մերուժանի, տնտեսագիտության թեկնածու
2. Ավետիսյան Աստղիկ Սիմոնի, դասախոս
3. Խաչատրյան Գայանե Արտիկի, դասախոս, լաբորանտ

Համատեղողներ

1. Հերզնյան Մարիամ Նորիկի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Խչեյան Մակիչ Համլետի, տնտեսագիտության թեկնածու
3. Մուրադյան Գուրգեն Գևորգի, դասախոս

Ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունները

ՀՀ արժեթղթերի շուկան և նրա վերլուծությունը:

- Ամբիոնի դասախոս Մակիչ Համլետի Խչեյանը «ՀՀ ներքին պետական պարտքի մոդելավորումը» թեմայով (Ը.00.08 մասնագիտություն) պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսական ձեռնարկ	Ռեսուրսամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
				9	

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

1. Խչեյան Ս. Յ. Պետական պարտատոմսերի շուկայի ընդհանրացված վեկտորային ավտոռեգրեսիոն մոդել // Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմկա, N1, էջ 78-81:
2. Խչեյան Ս. Յ. Պետական պարտատոմսերի եկամտաբերության կանխատեսման մոդել // Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմկա, N1, էջ 81-83:
3. Խչեյան Ս. Յ. Պետական պարտատոմսերի շուկայի ծավալի կանխանտեսման ARMA մոդելներ // Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմկա, N3, էջ 81-84:
4. Գարաքյան Գ. Ս. Գրավը և բանկերի կողմից դրա գնահատման առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 365-369:
5. Գարաքյան Գ. Ս., Գարաքյան Գ. Գ. ՀՀ բանկային համակարգը և նրա զարգացման օրինաչափությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 370-373:
6. Գարաքյան Գ. Ս., Հայրապետյան Գ. Վ. ՀՀ պետական պարտքը, դրա ձևավորման և մարման առանձնահատկությունները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 374-379:
7. Խաչատրյան Գ. Ա. Առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 383-389:
8. Խաչատրյան Գ. Ա. Առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության գործակիցների և գործոնների փոխկապվածությունը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 390-395:
9. Հերզնյան Ս. Ն. Գործարար հաղորդակցությունը որպես լավագույն բիզնեսի կազմակերպման և զարգացման գրավական // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 437-442:

Հաշվապահական հաշվառման ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ *Հակոբ Մելսիկի Ղուլոյան, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Խլղաթյան Իշխան Երեմի, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
2. Առաքելյան Վալերի Հովհաննեսի, տնտեսագիտության թեկնածու., դոցենտ
3. Ջազեյան Վլաչեսլավ Գուրգենի, դասախոս
4. Ղաջոյան Կարինե Համլետի, դասախոս
5. Առաքելյան Նելլի Վազգենի, դասախոս, լաբորանտ

Համատեղողներ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի, տնտեսագիտության թեկնածու., դոցենտ
2. Սարգսյան Պարզև Սուրիկի, դասախոս
3. Պողոսյան Ռուդիկ Գեորգու, դասախոս
4. Հակոբյան Անահիտ Ալեքսանի, դասախոս
5. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի, դասախոս

Ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունները

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործում:

բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակում և կատարելագործում:

գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
		4		5	

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

1. Խլղաթյան Ի. Ե. Ամիրխանյան Ս. Գ. Շահերի ներդաշնակության հիմնախնդիրը անցումային էկոնոմիկայում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N10, 2008, էջ 361-365:
2. Ղուլոյան Հ. Մ. Ձեռնարկության միջնաժամկետ պլանավորման խնդիրները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N10, 2008, էջ 380-383:
3. Պողոսյան Ռ. Գ. Ապահովագրական ծախսերի հաշվառում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N10, 2008, էջ 412-416:
4. Առաքելյան Վ.Հ., Մելտոնյան Ա.Բ., Ջազեյան Վ.Գ. Նորամուծությունները որպես արտադրության ստրատեգիական պլանավորման օբյեկտ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N10, 2008, էջ 416-424:
5. Առաքելյան Վ. Հ., Էլիզբարյան Ս. Ֆ., Ջազեյան Վ. Գ. Կազմակերպության գործունեության ոլորտի ստրատեգիայի սահմանման մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունամիտար գիտություններ, N10, 2008, էջ 424-431:
6. Ղուլոյան Հ. Մ., Առաքելյան Վ. Հ և ուրիշներ, Նորամուծությունների կառավարում Ուսումնական ձեռնարկ, Եր, Հեղինակային հրատարակություն, 2008:
7. Ղուլոյան Հ. Մ. Առաքելյան Վ. Հ և ուրիշներ, Որակի կառավարում // Ուսումնական ձեռնարկ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2008:
8. Առաքելյան Վ. Հ և ուրիշներ, Կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետության գնահատում // Ուսումնական ձեռնարկ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2008:
9. Առաքելյան Վ. Հ. և ուրիշներ, Ժամանակակից մարքեթինգ (փորձ և հիմնախնդիրներ) // Ուսումնական ձեռնարկ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2008:

Բիզնեսի կազմակերպման ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Ջաբրյան Հրաչյա Սամվելի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կարապետյան Վարազդատ Ազատի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. Հովակիմյան Ռազմիկ Ռուբենի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. Բազոյան Սոնա Սահակի, դասախոս, լաբորանտ

Համատեղողներ

1. Սարգսյան Գոռ Ռոբերտի, տնտեսագիտության թեկնածու
2. Ոսկանյան Արթուր Վազգենի, դասախոս
3. Մարտիրոսյան Ռշտուն Հովակիմի, դասախոս
4. Թադևոսյան Նարինե Հակոբի, դասախոս
5. Շահինյան Վարդուհի Էդիկի, դասախոս

Ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունները

ՀՀ տարբեր տարածքներում բիզնեսի անհամաչափ զարգացման պատճառները և դրանց վերացման ուղիները:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսական ձեռնարկ	Ռեսուրսամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
				2	

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ*

1. Սարգսյան Գ.Ռ. Ռիսկի տնտեսական մեկնաբանություններ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 396-401:
2. Սարգսյան Գ.Ռ. Ռիսկի գործոնների վերլուծությունը և դասակարգումը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Հունանիտար գիտություններ, N10, 2008, էջ 401-406:

ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Կուսուղյան Նելլի Ալբերտի, ֆիզ.-մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ֆակուլտետի մասնագիտացումները և մասնագիտությունները

Դասիչ	Մասնագիտություն
0125	Աշխարհագրություն
0207	Պատմություն
0217	Ռուսաց լեզու և գրականություն
0230	Հայոց լեզու և գրականություն
0312	Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա

Մասնագիտացումներ՝
(դիպլոմավորված մասնագետ)

աշխարհագրագետի, աշխարհագրության ուսուցչի
 պատմաբանի, պատմության ուսուցչի
 բանասերի, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի
 բանասերի, հայոց լեզվի և գրականության ուսուցչի,
 տարրական դասարանի ուսուցչի

Ուսանողների թիվը՝ 908
Շրջանավարտների թիվը՝ 99

**Քննաշրջանի արդյունքները
Ձմեռային քննաշրջան**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար զնահատական ստացած ուսա- նողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Աշխարհագրություն				
1-ին	27	-	-	96.3
2-րդ	46	-	-	100
3-րդ	27	-	-	96.2
4-րդ	25	-	-	68
5-րդ	20	-	3	70
6-րդ	21	6	-	14
Պատմություն				
1-ին	45	1	-	88.9
2-րդ	48	-	-	87.5
3-րդ	34	-	-	97
4-րդ	36	-	-	77.7
5-րդ	41	-	-	82.9
6-րդ	33	1	-	81.8
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	19	-	-	89.5
2-րդ	37	-	-	75.6
3-րդ	22	-	-	81.8
4-րդ	35	-	-	91.4
5-րդ	24	-	-	100
6-րդ	22	-	-	100
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	35	-	-	91.4
2-րդ	41	7	3	68.3
3-րդ	39	-	-	100
4-րդ	28	-	2	46.4
5-րդ	30	-	-	86.6
6-րդ	24	-	4	87.5
Տարրական.կրթ. մանկ. և մեթոդիկա				
1-ին	29	-	-	100
2-րդ	45	-	-	88.9
3-րդ	33	6	-	81.8
4-րդ	35	-	-	97.1
5-րդ	22	-	6	91
6-րդ	11	-	-	100
Ընդամենը	934	21	18	85.3

Ամառային քննաշրջան

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսա- նողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Աշխարհագրություն				
1-ին	26	2	1	69.2
2-րդ	41	5	1	47.6
3-րդ	24	2	1	50.0
4-րդ	21	-	-	23.8
5-րդ	15	1	-	73.3
Պատմություն				
1-ին	38	10	-	56.4
2-րդ	48	15	-	54.2
3-րդ	35	4	-	80.0
4-րդ	32	13	-	34.3
5-րդ	40	1	-	5.0
Ռուսաց լեզու և գրականություն				
1-ին	15	2	1	70.5
2-րդ	34	9	1	57.1
3-րդ	22	-	3	100
4-րդ	34	-	8	77.1
5-րդ	23	5	2	62.5
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	33	1	3	87.8
2-րդ	41	1	2	95.1
3-րդ	37	2	1	86.8
4-րդ	26	1	2	77.7
5-րդ	28	-	6	89.2
Տարրական կրթ. մանկ. և մեթոդիկա				
1-ին	27	6	-	62.9
2-րդ	37	3	-	79.4
3-րդ	31	2	3	83.9
4-րդ	35	-	2	97.1
5-րդ	22	-	6	95.4
Ընդամենը	765	85	43	70.95

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ Ղարիբյան Ալինա Անբիկի

Գավառի պետական համալսարանի Ակադեմիական քաղաքականության վարչությունը ձևավորվել է 2007թ. օգոստոսի 25-ին ուսումնական մասի հիման վրա: Վարչությունը համալսարանի ուսումնական գործընթացը կոորդինացնող կառույցն է, որը բաղկացած է՝

- մինչբուհական (նախապատրաստական) կրթության,
- միջին մասնագիտական կրթության և
- բարձրագույն կրթության բաժիններից:

Վարչության կարևոր խնդիրն է՝ ապահովել համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման գործընթացը, որը փորձնականորեն կիրառվել էր 2006-2007 ուս. տարում բանասիրական ֆակուլտետում և տնտեսագիտական ֆակուլտետի Բիզնեսի կազմակերպում բաժնում: Ելնելով կրեդիտային համակարգի պահանջներից՝ վերանայվեցին բոլոր ուսումնական պլանները: Ամբիոնների, դեկանատների և վարչության համատեղ ջանքերով կրեդիտային հիմունքներով մշակվեցին և հաստատվեցին բակալավրիատի քառամյա ուսումնական պլանները, որոնց հիման վրա կազմվեցին առարկայական ծրագրերն ու թեմատիկ պլանները: Պլաններում կատարվեցին մի շարք ճշգրտումներ՝ կապված առարկաների, ժամաքանակների, կուրսային աշխատանքների հետ՝ ելնելով մասնագիտությունների առանձնահատկություններից: Կատարվեց ուսումնական ծանրաբեռնվածության օպտիմալ բաշխում համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջև:

Կրեդիտային համակարգի սկզբունքներին համապատասխան՝ վարչությունում մշակվեցին ստուգադքային, քննական, լուծարային և մյուս ակադեմիական փաստաթղթերը:

Ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով վարչությունը համագործակցում է ամբիոնների, դեկանատների և համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Ֆակուլտետներում անցկացվող միջանկյալ և ամփոփիչ քննությունները վարչության ուշադրության կենտրոնում են:

Վարչությունը կոորդինացնում է ուսանողների ներբուհական և միջբուհական տեղափոխությունների, ուսումնամանկավարժական պրակտիկաների, ավարտական քննությունների կազմակերպման, դիպլոմների պատրաստման և հանձնման գործընթացները:

Մինչբուհական կրթական ծրագրերի իրականացման նպատակով վարչությունը կազմակերպում է նախապատրաստական դասընթացներ և փորձում ավելի սերտացնել

համալսարան-դպրոց կապերը: Այդ շրջանակներում 2007-2008 ուս. տարվա երկրորդ կիսամյակում կազմակերպվեցին շրջայցեր Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներ, տեղի ունեցան հանդիպումներ ավարտական դասարանների աշակերտների և դպրոցների տնօրենների, մանկավարժական կոլեկտիվների հետ:

Վարչությունն իր աշխատանքները կատարում է համալսարանի կանոնադրության հիման վրա, իր իրավասությունների շրջանակում:

ԳՎՎՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանի վարիչ՝ *Քաղայլան Ելիզավետա Արտուշի, մատենագետ*

Գրքային ունեցվածքը՝	31.500	Բաժին՝	2
ընթերցողները՝	2850	ընթերցասրահ՝	2
հաճախունը՝	300.500	աշխատողների թիվը՝	3
գրքատացքը՝	500.800		

Գավառի պետական համալսարանն ունի 2 գրադարան, 2 ընթերցասրահ, ամբիոններին կից ուսումնական գրականությամբ համալրված կաբինետներ և համակարգչային լսարաններ:

Համալսարանի գրադարանի ֆոնդը ստեղծվել է նվիրատվությունների միջոցով: Ելնելով ուսումնական ծրագրերի և գիտահետազոտական աշխատանքների պահանջներից՝ ֆոնդի հետագա համալրումը կատարվել է համալսարանի կողմից պարբերաբար իրականացվող գնումների և հեղինակների, անհատների նվիրատվությունների միջոցով:

2007-2008 ուս. տարում համալսարանի գրադարան է նուտքագրվել շուրջ 7000 կտոր գրականություն: Դրանք հիմնականում լեզվաբանությանը վերաբերվող դասագրքեր են և հայերեն ու ռուսերեն մասնագիտական գրքեր:

Լինելով «Հայկական գրադարանային միության» անդամ՝ համալսարանը Ազգային գրադարանից ստացել է 239 կտոր գրականություն՝ համալրելով հայ և արտասահմանյան գրականության բաժինները: Իսկ Երևանի Ս. Մերգեյանի անվան ինստիտուտից բերված շուրջ 4000 կտոր գրականությամբ համալրվել է բնագիտական մասնաշենքի գրադարանի ֆոնդը: Հարստացվել են գրադարանի ֆոնդի մաս կազմող պարբերական մամուլը, ամսագրերը, քարտեզները, ատլասները: Գրադարանի ինֆորմացիոն-տեղեկատվական ապարատը՝ հանրագիտարանները, բառարանները, մատենագիտական թեմատիկ քարտարանները, գիտական հոդվածների և սեղմագրերի մատենագիտական ցանկերը, ինչպես նաև

ինտերնետային համակարգը դասախոսների և ուսանողների համար հնարավորություն են ստեղծել օգտվելու նաև համաշխարհային տեղեկատվական ռեսուրսներից: Գրադարանը և ընթերցասրահը վերազինվել են նոր սերնդի համակարգիչներով: Գրքային ֆոնդի մուտքագրումը, ինչպես նաև մնացած աշխատափուլերի էլեկտրոնային գործընթացը, պարտք ունեցող դասախոսներից և ուսանողներից գրականության ձեռքբերումը գրադարանի ամենօրյա աշխատանքի մասն են կազմել:

Ընթացիկ տարում ամբիոնների դասախոսների մասնակցությամբ կատարվել է մասնագիտական գրականության զտում, գրականության վերադասավորում, գրքերի ստուգում և վերանորոգում:

Թեմատիկ ալբոմների և գիտական հոդվածների մատենագիտությունների օգնությամբ ուսանողներին և ամբիոններին տրամադրվել են նյութեր դիպլոմային, կուրսային, անհատական աշխատանքներ, ինչպես նաև մրցույթներ և միջոցառումներ կազմակերպելու համար:

Գրքի պրոպագանդան ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում գրադարանը պարբերաբար տարբեր խմբերի ուսանողների համար կազմակերպել է ընթերցումների ժամեր, գրքերի քննարկումներ, գրական, մշակութային միջոցառումներ, «Աշնան մեղեդիներ» երաժշտական և «2008-ը՝ Սարոյանական տարի» գրական-գեղարվեստական ցերեկույթներ: 2007-2008 ուս. տարին համալսարանում նշանավորվել է համալսարանի հիմնադրման 15 և հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հրանտ Հակոբյանի ծննդյան 80 ամյակին նվիրված միջոցառումներով:

«ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» - ԳԳՀ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԵՐԹ

Խմբագիր՝ Ազրոյան Լևոն Սիսակի

Հաշվետու ժամանակաշրջանում լրացավ «Գավառի համալսարան» թերթի երրորդ տարինը: Թերթն այժմ լույս է տեսնում ոչ միայն թղթային կրիչով, այլև էլեկտրոնային տարբերակով «www.gsu.am» կայքում: «ԳՀ» թերթը դարձել է թե՛ համալսարանի ուսանողության, պրոֆեսորադասախոսական կազմի, և թե՛ տարածաշրջանի բնակիչների սպասված պարբերականը:

«Գավառի համալսարան» թերթն իր համարներում լուսաբանում է համալսարանական կյանքը՝ լինի դա ուսումնական-գիտական գործունեություն, կազմակերպում, թե՛ գիտաժողովների անցկացում, համալսարանի դասախոսների հեղինակած գրքերի ներկայացում: Թերթում տեղ են գտել համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումների, կարգապահության բարձրացման, որակի ապահովման վերաբերվող տեղեկատվական նյութեր: Հատկապես անդրադարձել ենք համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման, կրթության որակի ապահովման ներբուհական ընթացակարգերի արմատավորման գործընթացներին:

Թերթի ուշադրությունից չի վրիպել նաև համալսարանում գործող կաբինետների, ըստ հետաքրքրության զանազան խմբակների գործունեության լուսաբանումը: Առանձին համարներում նյութեր են զետեղվել համալսարանի ուսանողական խորհրդի աշխատանքի մասին:

Թերթի էջերում հաճախ են տպագրվել նյութեր Գավառի պետական համալսարանի և հանրապետության մյուս բուհերի, գիտական-մշակութային կազմակերպությունների, միջազգային կառույցների համագործակցության մասին: Պարբերականի ուշադրությունից չի վրիպում նաև մեր դասախոսների մասնակցությունը տարատեսակ և տարաբնույթ հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

«ԳՀ» թերթի էջերում «Մեր անվանի հայրենակիցները» խորագրի ներքո տպագրվել են նյութեր, որոնցում պատմվում է Գեղարքունիքի մարզի արժանավոր զավակների մասին:

«Գավառի համալսարան» թերթը հաշվետու ժամանակաշրջանում պահպանել է իր կայուն պարբերականությունը, լույս է տեսել ամեն ամիս: Թերթի ողջ տպաքանակը ըստ ընդունված կարգի, անվճար տարածվել է բոլոր ֆակուլտետներում, ամբիոններում և այլ ստորաբաժանումներում, մարզի համայնքներում:

Թերթը նոր՝ 2007-2008 ուսումնական տարվանից լույս է տեսնում գունավոր ձևավորմամբ և նոր ձևաչափով՝ ձգտելով դառնալ ավելի հետաքրքիր և բովանդակալից:

ՄԻԱՑՅԱԼ ԱՐՉՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Արհմիության նախագահ՝

Միրունյան Լյովա Գուրգենի

Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն իր կանոնադրական խնդիրներին համապատասխան՝ շարունակում է նախորդ տարիներին ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության ծրագրերի իրականացումը՝ համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես ՀՀ բուհերի արհեստակցական կազմակերպությունների հանրապետական խորհրդի, այնպես էլ պետական բուհերի արհկոմիտեների հետ:

Ուշադրության կենտրոնում են եղել համալսարանի դասախոսների, վարչատնտեսական կազմի և ուսանողների առողջության պահպանման, հանգստի կազմակերպման, մարզական միջոցառումների անցկացման և այլ սոցիալական խնդիրները:

Ֆինանսական օգնության կարգով բուժման կամ այլ կարիքները հոգալու նպատակով աշխատակիցներին և ուսանողներին արհկոմը տրամադրել է 848 հազար դրամ:

Ռեկտորատի ֆինանսական աջակցությամբ աշխատակիցների և ուսանողների համար կազմակերպվել են Ամանորի և Կանանց միջազգային օրվան նվիրված ամենամյա միջոցառումներ:

2008թ. գարնանը կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ, ինչպես նաև համալսարանական ֆուտբոլի և վոլեյբոլի առաջնությունները:

2008թ. աջակցություն է ցուցաբերվել ուսանողական միջոցառումների կազմակերպմանը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ուսանողական խորհրդի նախագահ՝ *Տերտերյան Վահե Ժորայի*

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողական խորհուրդը իրականացրել է ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական, մշակութային, ինտելեկտուալ զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

2007թ. սեպտեմբերին կազմակերպվել է «Բարի գալուստ» միջոցառումը՝ նվիրված առաջին կուրսի ուսանողներին:

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ուսանողական խորհրդի անդամների մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք հիշարժան էքսկուրսիաներ դեպի հանրապետության պատմամշակութային վայրեր:

ԳՊՀ ուս. խորհուրդը հոկտեմբերի 21-ին կազմակերպեց ԳՊՀ-ում արդեն ավանդական դարձած «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղը, որին մասնակցեցին համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողական թիմերը:

Նոյեմբերի 13-ին երաժշտական դպրոցի հետ համատեղ կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի հիշատակին:

Նոյեմբերի 21-ին կազմակերպվեց Նապոլեոն Բոնապարտի կյանքին և գործունեությանը նվիրված բաց դաս:

Նոյեմբերի 23-30-ին ԳՊՀ ուս. խորհուրդը կազմակերպեց միջոցառումների շարք՝ նվիրված Մոնթե Մելքոնյանի 50 -ամյակին: Այդ միջոցառումների շրջանակում այցելեցինք Եռաբլուր՝ Մոնթե Մելքոնյանի գերեզմանին:

2007 թվականը եզրափակեցինք Ամանորին նվիրված համահամալսարանական միջոցառմամբ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի և ուսանողական խորհրդի ջանքերով մեր ուսանողները հունվարի 25-27-ը Ծաղկաձորում մասնակցեցին «Զմեռային դպրոց» միջոցառմանը, որտեղ հաղթող ճանաչվեցին «Դատական նախադեպ» թեմայով մրցույթում:

2008 թ. մարտի 7-ին տեղի ունեցավ կոնֆերանս «Կանանց հիմնախնդիրները և կինը հասարակական-քաղաքական կյանքում» թեմայով, որտեղ ներկայացվեցին կանանց իրավունքների պաշտպանությանը առնչվող խնդիրներ:

2008թ. մարտի 15-ին հերթական անգամ տեղի ունեցավ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղը:

2008թ. գարնանը կազմակերպվել են սպորտային բազմաթիվ միջոցառումներ:

Կանանց, մայրությանն ու գեղեցկությանը նվիրված միամսյակ անցկացվեց մարտի 8-ից ապրիլի 7-ը: Այդ ընթացքում կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Սայաթ-Նովայի քնարական ստեղծագործություններին, իսկ Գավառի երաժշտական դպրոցի հետ համատեղ կազմակերպվեց գրական-երաժշտական ցերեկույթ:

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացավ կոնֆերանս «1917թ. Ռուսաստանի հեղափոխությունը և Հայաստանը» թեմայով:

Ռուսաց լեզվի ամբիոնի հետ համատեղ կազմակերպվեց գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված ռուս մեծ բանաստեղծ Սերգեյ Եսենինի կյանքին և գործունեությանը:

ԳՊՀ Տնտեսագիտական ակումբի հետ համատեղ կազմակերպվեց միջոցառում, որտեղ ուսանողները ներկայացրին իրենց առաջարկները և ակնկալիքները համալսարանից:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական խորհուրդը համագործակցել է ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության հետ: Ապրիլի 19-ին կայացավ ուսանողական գիտաժողով «Կենսոլորտի էկոլոգիական հիմնախնդիրները» թեմայով: Բոլոր ֆակուլտետներում անցկացվել են կոնֆերանսներ, գիտական բանավեճեր, «Կլոր սեղաներ» և սեմինարներ, ինչպես նաև բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված գիտության, կրթության և մշակույթի մի շարք ոլորտներին, կազմակերպվել են էքսկուրսիաներ դեպի պատմական հուշարձաններ, այցելություն Գավառի մանկատուն և օժանդակ դպրոց: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ԳՊՀ ուսանողական խորհուրդը Գեղարքունյաց թեմի առաջնորդի հետ միասին այցելել են Սևանի Վազգենյան ճեմարան:

ԳՊՀ ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցում է հանրապետության այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

ԳՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Իրավաբանական կլինիկայի կորորդինատոր՝ Ապրոյան Արսեն Յրաչիկի

Գավառի պետական համալսարանի Իրավաբանական կլինիկայի առաքելությունն է դառնալ իրավական իրազեկման կենտրոն՝ Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցելով անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում Իրավաբանական կլինիկայում մշակվել է իրավաբան ուսանողների համար նախատեսված «Իրավաբանական կլինիկական կրթություն» ուսումնական ձեռնարկը: ԳՊՀ-ի Իրավաբանական կլինիկան համագործակցում է այլ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների, միջազգային կառույցների հետ:

Իրավաբանական կլինիկայի նպատակներն են.

- ✓ Նպաստել իրավաբանական կլինիկայի ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը,
- ✓ Անվճար խորհրդատվություն մատուցել Գեղարքունիքի մարզի ազգաբնակչությանը,
- ✓ Բարձրացնել հասարակության իրավական գիտելիքների մակարդակը՝ այդ նպատակով կազմակերպելով քննարկումներ, վերապատրաստման դասընթացներ, կլոր սեղաններ, սեմինարներ, հանդիպումներ:

ԳՊՀ-ի Իրավաբանական կլինիկայում ուսանողները ուսումնասիրում են կանանց և երեխաների իրավունքները, փաստաբանական աշխատանքի հմտությունները, սովորում են մասնագիտական էթիկայի կանոնները, ընդունում են հաճախորդների, սովորում են իրավաբանական գործի կազմման, վարման և լուծման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ինչպես նաև ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին, ինչը նախատեսված չէ ուսումնական պլաններում:

Հաշվետու ժամանակահատվածում Իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 12 ուսանողներ, որոնք սկսած 2008թ. հունվարից 86 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԳՊՀ Իրավաբանական կլինիկայի 12 ուսանողներ մասնակցել են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից կազմակերպված «Ձմեռային դպրոց 2008»-ին և ստացել դատախազ մրցույթի հաղթող թիմի մրցանակ:

«Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում Իրավաբանական կլինիկան 2007-2008 ուս.տարում «Ընտրական իրավունք» թեմայով կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ, սեմինարներ, որոնց մասնակցել են շուրջ 200 քաղաքացիներ:

Գավառի պետական համալսարանի Իրավաբանական կլինիկական փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվություն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև անվճարունակ, անպաշտպան անձանց: Կարևոր է, որ Իրավաբանական կլինիկական փորձում է տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդների տիրապետող և տարբեր ծրագրերով վերապատրաստում անցած դասախոսներ:

Իրավաբանական կլինիկայի դասախոսները մասնակցել են նաև ABA/CEELI Հայաստանյան գրասենյակի, Հայաստանի ամերիկյան համալսարանի և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների:

ՆՅՈՒԹԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Տնտեսական գծով պրոռեկտոր՝ Ապրոյան Արսեն Հրաչիկի

2007թ. սեպտեմբերին հաստատվել է Համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2007-2008 ուս.տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը: Ըստ այդմ կազմակերպվել է ավելի քան 18 աշխատանքային հանդիպում տնտեսական աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, խնդիրները, դրանց լուծման միջոցները: Ներբուհական տնտեսությունը կազմակերպելիս օգտագործվել է ինչպես Համալսարանի տնտեսական աշխատակիցների, այնպես էլ այլ կազմակերպությունների մասնագիտացված աշխատակիցների ներուժը:

Հստակեցվել են Համալսարանի տնտեսական աշխատակազմի հաստիքները, կատարվել է ֆունկցիաների տարանջատում հիսունչորս տնտեսական աշխատակիցների միջև, կարևորվել է Համալսարանի տնտեսական աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

Աշխատանքների ռացիոնալ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, կոորդինացվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

2007թ. սեպտեմբերից 30-40%-ով բարձրացվել են տնտեսական աշխատակիցների աշխատավարձերը: Բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների նյութական խրախուսման միջոցներ:

2008թ. ամանորի առթիվ 10.000-ական դրամական պարգևատրումներ են ստացել տնտեսական աշխատակազմի բոլոր անդամները: Դրամական պարգևատրման ձևով խրախուսվել են նաև նրանք, ովքեր մասնակցել են Համալսարանում իրականացված մասնակի վերանորոգման աշխատանքներին:

Հաշվետու ժամականահատվածում՝

1. Համալսարանի բոլոր ամբիոններին տրամադրվել են համակարգիչներ, բացվել է մեկ նոր համակարգչային լսարան, ինչպես նաև Համալսարանում ստեղծել է տնտեսական կառուցվածքային ստորաբաժանում՝ տեխնիկական շահագործման բաժին, որի նպատակն է ապահովել Համալսարանի բոլոր ստորաբաժանումների տեխնիկական պատշաճ սպասարկումը:

2. Ինտերնատային կապով ապահովվել է Համալսարանի 2-րդ մասնաշենքը:

3. Կատարվել են կապիտալ շինարարական և մասնակի վերանորոգման աշխատանքներ: Այս առումով բարելավվել են ինչպես երեք մասնաշենքերի սանհանգույցները, այնպես էլ հանրակացարանի սենյակները և ուսումնական լաբորատորիաները, լսարանները:

Հաշվետու ժամանակաշրջանում ձեռք են բերվել նոր արտասահմանյան մակնիշի ավտոբուս, տնտեսական, տեխնիկական, գրենական այն բոլոր ապրանքներն ու նյութերը, որոնք անհրաժեշտ են համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացման և որակյալ կրթական գործընթաց ապահովելու համար:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀՏՇ բաժնի մասնագետներ՝ *Աղթուր Աշոտի Միրիքյան, Կարեն Սաշայի Սիրականյան,
Հայրիկ Խաչիկի Ջարգարյան*

Հաշվետու ժամանակահատվածում Համակարգչային տեխնիկայի շահագործման (ՀՏՇ) բաժինն իրականացրել է ԳՊՀ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման, համալսարանի ներքին ցանցի շահագործման և ԳՊՀ ինտերնետային կայքի կառուցման և կառավարման աշխատանքները:


2007-2008 ուս. տարում համալսարանը համալրվեց ևս 35 նոր համակարգիչներով (այդ թվում՝ 1 հատ հզոր սերվեր համակարգիչ 2xintel Xeon 3.0Ghz dual core), 8 լազերային տպիչ, A2 ֆորմատի պատճենահանող սարք, 15 անխափան սնուցման սարք (UPS), որոնք բաշխվեցին ԳՊՀ վարչական ստորաբաժանումների և համակարգչային լսարանների միջև: ՀՏՇ բաժնի աշխատակիցների կողմից իրականացվեցին համակարգիչների և հարակից սարքավորումների տեղադրման, դրանց պարբերաբար զննման, կիրառական և պաշտպանական ծրագրերի թարմացման և այլ աշխատանքներ:

Ելնելով բուհի աշխատանքների պատշաճ կազմակերպման անհրաժեշտությունից՝ 2008թ.-ին ՀՏՇ բաժինը ձեռնամուխ եղավ համակարգչային լոկալ ցանցի ստեղծմանը: Նախնական հաշվարկների, նախագծման, անհրաժեշտ նյութերի ձեռքբերման և սարքերի տեղադրման արդյունքում ԳՊՀ-ում կառուցվեց համակարգչային ներքին ցանցը, որը ներառում է ռեկտորատը, ակադեմիական քաղաքականության վարչությունը, բոլոր դեկանատներն ու ամբիոնները: Այդպիսով առավել դյուրին և արդյունավետ կդառնա բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների փոխադարձ կապը, ուսումնա-վարչական փաստաթղթաշրջանառությունը: ՀՏՇ բաժնում տեղադրվեց նոր սերվեր, որի միջոցով պետք է կառավարվի և հսկվի ողջ ներցանցային համակարգը: Ստեղծվել է նոր համակարգչային լսարան՝ նախատեսված մասնագիտական կուրսերի համար:


ՀՏՇ բաժինը կրում է նաև համալսարանի համակարգչային լաբորատորիաների և ինտերնետային լսարանի սպասարկման, ԳՊՀ ինտերնետային կայքի ղեկավարման ու թարմացման պատասխանատվությունը: ՀՏՇ բաժնի միջոցով է կատարվում ԳՊՀ թերթի համակարգչային դիզայնը:

Շնորհիվ բաժնի հետագա կառուցողական աշխատանքների՝ ինտերնետային ցանց կտրամադրվի նաև բուհի մնացած ստորաբաժանումներին, ԳՊՀ կայքը կդառնա առավել բազմազան ու դինամիկ, և կստեղծվեն ինֆորմացիոն բազաներ՝ համալսարանի վարչական աշխատանքներն առավել արդյունավետ ու օպերատիվ դարձնելու նպատակով:


ԱՌԿԱ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՆ ԸՍՏ ՏԵՍԱԿԻ




ԸՍՏ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ



ՄՈՆԻՏՈՐՆԵՐ



ՀԱՐԱԿԻՑ ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄՆԵՐ



2007- 2008 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ

[01.09.2007թ.] ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Միջոցառումը նվիրված էր գիտելիքի օրվան, ուսումնական տարվա մեկնարկին: Տեղի ունեցավ առաջին կուրսի ուսանողների երդման հանդիսավոր արարողություն, բաժանվեցին «Առաջին կուրսեցու ուղեցույցը» և առաջին կուրսեցիների համար պատրաստված փաթեթը: Ուսանողները ծանոթացան համալսարանում գործող կանոններին, իրենց իրավունքներին և պարտականություններին: Ներկաներին ողջունեց նաև Գեղարքունիքի մարզպետ Ն.Պողոսյանը:

[15.09.2007թ.] ԻՆՉ ԵՄ ԱԿՆԿԱԼՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

Տնտեսագիտական ակումբի հետ համատեղ կազմակերպվեց միջոցառում, որտեղ ուսանողները ներկայացրին իրենց սպասելիքները համալսարանից, իրենց առաջարկությունները, նկատառումներն ու ցանկությունները:

[24-26.09.2007թ.] ՆԵՅՐՈՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՆԵՅՐՈՒՄՈՒՆՈԼՈԳԻԱՅԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ /գիտաժողով/

ՀՀ ԳԱԱ Կենսաքիմիայի ինստիտուտի և ԳՊՀ-ի համատեղ կազմակերպած միջազգային գիտաժողովը նվիրված էր անվանի գիտնական Հր.Խ.Բունիաթյանի ծննդյան 100-ամյակին: Մասնակցում էին մի շարք երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Նորվեգիա, Ռուսաստան, Վրաստան) ճանաչված գիտնականներ: Գիտաժողովը եղրափակվեց ԳՊՀ-ի բնագիտական ֆակուլտետում ակադեմիկոս Հր.Խ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի լաբորատորիայի բացման հանդիսավոր արարողությամբ:

[06.10.2007թ.] ԲԱՐԻ ԳԱԼՈՒՄՏ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐ

Առաջին կուրսեցիներին նվիրված գեղարվեստական միջոցառումների նպատակն էր բարձր կուրսեցիների աչքերով ներկայացնել իրենց ֆակուլտետների ուսումնական առօրյան, մասնագիտությունների առանձնահատկությունները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի պահանջները և ներհամալսարանական կարգապահական կանոնները:

[17.10.2007թ.] 1917Թ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՊՀ Պատմության ամբիոնի կողմից կազմակերպված գիտաժողովում ուսանողները

ներկայացրեցին զեկուցումներ «Ռուսաստանյան հեղափոխությունը և Հայաստանը» թեմայով:

[27-28.10.2007] ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հանրապետական գիտաժողովը նվիրված էր տարածաշրջանի բնապահպանական հիմնախնդիրներին, բնական պայմանների և ռեսուրսների գնահատականին կայուն մարդկային զարգացման տեսանկյունից և բնառեսուրսային ներուժի կարևորությանը տարածաշրջանի տնտեսական զարգացման մեջ: Գիտաժողովին մասնակցում էին գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների առաջատար մասնագետներ: Ձեկուցումների և եզրափակիչ քննարկման արդյունքում ձևակերպվեցին տեսական և գործնական բնույթի առաջարկություններ և ընդունվեց որոշում՝ դիմել ՀՀ վարչապետին, Բնապահպանության նախարարին, Գեղարքունիքի մարզպետին և բոլոր շահագրգիռ կազմակերպություններին՝ ներկայացնելով առաջարկություններ և նկատառումներ:

[23.11.2007թ.] ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ցերեկույթը նվիրված էր ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 50 ամյակին: Փաստավավերագրական տեսաֆիլմում և ելույթ ունեցողների խոսքերում հանգամանալից ներկայացվեց հերոսի կենսագրությունը և նրա անմահ սխրանքը՝ որպես հայրենասիրության վառ դրսևորում: Այնուհետև համալսարանականներն այցելեցին Եռաբլուր՝ հերոսի գերեզմանին:

[13.11.2007թ.] ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Գավառի Հ.Թալալյանի անվան երաժշտական դպրոցի հետ համատեղ կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված հայ հանրահռչակ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի ծննդյան 80-ամյակին: Համառոտ ներկայացվեց նրա կյանքը և ստեղծագործական գործունեությունը: Այն ուղեկցվեց կոմպոզիտորի ստեղծագործությունների երաժշտական կատարումներով:

[22-23.12.2007թ.] ԳՊՀ 10-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԳՊՀ ամենամյա 10-րդ գիտաժողովը նվիրված էր ԳՊՀ հիմնադրման 15-ամյակին և հիմնադիր ռեկտոր, պրոֆեսոր Հր.Խ.Հակոբյանի ծննդյան 80-ամյակին: Լիագումար նիստում զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Վ.Ս.Սարգսյանը:

[29.12.2007թ.] ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ

Կազմակերպվեց Ամանորին նվիրված համահամալսարանական միջոցառում:

[07.03.2008թ] ԿԱՆԱՆՑ ՅԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԻՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ /կոնֆերանս/

Գիտաժողովում ներկայացվեցին կանանց իրավունքներին առնչվող զանազան թեմաներ, քննարկվեց կանանց դերը և ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքում: Միջոցառմանը հրավիրված էր Գեղարքունիքի մարզի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ Վ.Տ.Մարգարյանը:

[22.03.2008թ.] ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆ

Կազմակերպվեց գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված ռուս մեծ բանաստեղծ Ս.Եսենինի կյանքին և գործունեությանը: Հնչեցին հատվածներ Եսենինի ստեղծագործություններից:

[08.03.2008 - 07.04.2008թ.] ՄԱՅՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ԳԵՂԵՅԿՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻԱՄՍՅԱԿ Միամսյակի շրջանակում կազմակերպվեցին միջոցառումներ բոլոր ֆակուլտետներում, անցկացվեց շարադրությունների մրցույթ «Կին, մայրություն, գեղեցկություն» թեմայով, բացվեց մայրությանը նվիրված՝ ուսանողների աշխատանքների ցուցահանդես: Գավառի երաժշտական դպրոցի հետ համատեղ կազմակերպվեց միջոցառում և աշակերտներն ու ուսանողներն իրենց ջերմ ողջույնը հղեցին մայրերին, կատարեցին դասական երաժշտական ստեղծագործություններ: Տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Սայաթ-Նովայի քնարերգությանը, ներկայացվեցին կնոջը նվիրված նրա ստեղծագործությունները: Կազմակերպվեցին նաև այլ գրական-գեղարվեստական ցերեկույթներ:

Ուսանող-պրակտիկանտ-շրջանավարտ համագործակցությամբ՝ Հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողների և շրջանավարտների ջանքերով կազմակերպվեցին միջոցառումներ «Մայրություն և գեղեցկություն», «Հույս, հավատ, սեր» խորագրերով:

[11.04.08] «ԻՍԼԱՄԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՏԵՂԵԼԻ ԵՆ, ԹԵ ՈՉ»

Մարզի դպրոցականների և համալսարանի միջև կապն ակտիվացնելու և հետագա մասնագիտական կողմնորոշման հարցում նրանց օգնելու նպատակով Հեռակա ուսուցման ֆակուլտետի Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 6-րդ կուրսի

ուսանողուհի Լիաննա Ներսիսյանի կողմից Սևանի թիվ 7 միջնակարգ դպրոցի «Բանավեճի ակումբի» անդամ աշակերտների և ՀՄՖ Իրավագիտության 2-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ կազմակերպվեց բանավեճ «Իսլամը և ժողովրդավարությունը համատեղելի են, թե ոչ» թեմայով:

[12.04.2008] ԵԹԵ ՈՒԶՈՒՄ ԵՍ ՓՈՒՆԵԼ ԱՇԽԱՐՅԸ

«Տնտեսագիտական ակումբի» նախաձեռնությամբ տեղի ունեցած միջոցառման հիմնական նպատակը բիզնեսի ոլորտում կանանց դերի ճշգրտումն ու այս ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտումն էր Գավառ համայնքի կտրվածքով: Հանդիպմանը հրավիրված էին համայնքի մի շարք կազմակերպությունների տնօրեններ և գործարարներ: Ուսանողները նշեցին, որ «եթե ուզում ես փոխել աշխարհը, սկսիր քեզանից»:

[19.04.2008թ.] ԿԵՆՍՈՒՆՈՐՏԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնագետի օրվան նվիրված միջոցառմանը ուսանողները ներկայացրեցին զեկուցումներ կենսոլորտի աղտոտման հիմնախնդիրների վերաբերյալ: Տեղի ունեցավ քննարկում, առաջարկվեցին մի շարք կանխարգելիչ միջոցառումներ՝ կենսոլորտը աղտոտումից զերծ պահելու համար:

[20.04.2008] ՀՈՍԵՐՈՍԸ ԵՎ ՄԵՆՔ

«Հոմերոսը և մենք» մրցույթը նվիրված էր անտիկ գրականության զուլխգործոցներ՝ «Իլիական» և «Ոդիսական» պոեմներին: Վիկտորինայի հանձնաժողովի պատվավոր անդամ, ՀՀ Լեզվի տեսչության պետ Լավրենտի Միրզոյանը ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանին հանձնեց տեսչության պատվոգիրը՝ մայրենի լեզվի անաղարտության պահպանման գործում Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մեծ ավանդի համար:

[2008թ. ապրիլ-մայիս] «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ» ՓԱՌԱՏՈՆ

Փառատոնի շրջանակներում կազմակերպվեցին բազմաթիվ միջոցառումներ: Անցկացվեցին «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղը, «Լավագույն ֆակուլտետ» և «Լավագույն կուրս» մրցույթները: Լավագույն ֆակուլտետ ճանաչվեց ԳՊՀ Բանասիրական ֆակուլտետը, իսկ լավագույն կուրս՝ Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսը:

[25.05.2008] ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գիտաժողովը նվիրված էր սլավոնական այբուբենի և գրականության ստեղծման 1145-ամյակին: Հանդիսությանը ներկա էր Հայաստանում Բուլղարիայի արտակարգ և լիազոր դեսպան Տոդոր Ստայկովը, ով իր ելույթում նշեց. «Մեր երկու երկրների եղբայրությունն ունի դարերի պատմություն և այն պահպանելու համար յուրաքանչյուրս պետք է ներդնենք մեր բոլոր հնարավորությունները»: Ուսանողները հանդես եկան գիտական զեկուցումներով, նաև բուլղարերեն կատարումներով:

[26.05.2008] ԲԱՑ ԴՈՆԵՐԻ ՕՐ

Կազմակերպվեց մասնագիտությունների տոնահանդես-ցուցահանդես, «Բաց դռների օր», որին մասնակցեցին Գեղարքունիքի մարզի դպրոցների ավագ դասարանների աշակերտները: Ամփոփվեցին համալսարանում մեկ ամիս շարունակ անցկացված աշակերտական օլիմպիադայի արդյունքները բոլոր հանրակրթական առարկաների գծով: Հաղթողները պարգևատրվեցին դիպլոմներով և ստացան նյութական խրախուսանք:

[13.06.08] ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Միջոցառումը կազմակերպվել էր միջազգային կառույցների և ԳՊՀ Իրավաբանական կլինիկայի կողմից, և նվիրված էր կոռուպցիայի կանխարգելման միջոցների և ուղղությունների բացահայտմանը:

[05.07.2008] ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ

Նշվեց ՀՀ Սահմանադրության օրը և տեղի ունեցավ 2008թ. շրջանավարտների ավարտական վկայականների հանձնման արարողությունը: Գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներին վկայականներ հանձնեց ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանը, ով փոխանցեց ԳՊՀ հիմնադիր ռեկտոր, կառավարման խորհրդի նախագահ, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ջերմագին բարենաղթանքները և պատգամները բոլոր շրջանավարտներին:

[07.07.2008] ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ 5 ՏԱՐԵԿԱՆ Է

Միջոցառումը նվիրված էր Հեռակա ուսուցման ֆակուլտետի հիմնադրման 5-ամյակին: Ներկայացվեցին ֆակուլտետի գործունեության հիմնական ուղղությունները: Տեղի ունեցավ ֆակուլտետի շրջանավարտների ավարտական վկայականների հանձնման արարողություն:

[19.07.2008] ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Կլոր սեղան»: Հանդիպման նպատակն էր բարելավել Տնտեսագիտական ֆակուլտետի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ կադրերի պատրաստման ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ հաշվի առնելով տնտեսավարող սուբյեկտների փորձառու ղեկավարների կարծիքներն ու առաջարկությունները: Հրավիրված էին Գեղարքունիքի մարզի ձեռնարկությունների ղեկավարները, պատասխանատու անձինք:

2008թ. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Գավառի պետական համալսարանը երեք տարի շարունակ կազմակերպում է Աշակերտական օլիմպիադա, որին մասնակցում են ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտները:

2008թ. մարտի 12-ին կայացած ԳՊՀ ռեկտորատի նիստում որոշում կայացվեց անցկացնելու 2008թ. Աշակերտական օլիմպիադա՝ 9 հանրակրթական առարկաների գծով.

- | | |
|--------------------------------|---------------------|
| 1. Հայոց լեզու և գրականություն | 6. Ֆիզիկա |
| 2. Ռուսաց լեզու | 7. Քիմիա |
| 3. Անգլերեն | 8. Աշխարհագրություն |
| 4. Հայոց պատմություն | 9. Կենսաբանություն |
| 5. Մաթեմատիկա | |

Ներկայացված հայտադիմումներին համապատասխան՝ Օլիմպիադային մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզի 51 միջնակարգ դպրոցներ (շուրջ 970 մասնակցություն): Առավել ակտիվություն են ցուցաբերել Գավառ քաղաքի, Սարուխան, Նորատուս համայնքների միջնակարգ դպրոցները:

Օլիմպիադան այն բոլոր առարկաներից, որոնք 2008թ. շրջանավարտները հանձնում էին միասնական կարգով, անցկացվել է թեստային տարբերակներով, իսկ մնացածը՝ պետական բուհերի ընդունելության կարգով նախատեսված առարկայական քննական չափորոշիչների հիման վրա կազմված հարցատոմսերով:

Բոլոր գրավոր աշխատանքները ստուգվել են համալսարանի համապատասխան ամբիոնների դասախոսների կողմից, իսկ վիճահարույց աշխատանքները վերանայվել են դասախոսների կոլեգիալ կազմով:

Ըստ վիճակագրական տվյալների այս տարի ակտիվացել է աշակերտների մասնակցությունը հատկապես «Չայոց լեզու, գրականություն», «Անգլերեն», «Մաթեմատիկա» առարկաներից և ավելի քիչ մասնակիցներ են գրանցվել բնագիտական առարկաների համար:

Օլիմպիադայի կազմկոմիտեի որոշմամբ 40 աշակերտներ 1-ին, 2-րդ և 3-րդ տեղը զբաղեցնելու համար պարգևատրվել են պատվոգրերով:

Օլիմպիադայի արդյունքների ամփոփագրերը տրամադրվել են մասնակից 51 հանրակրթական դպրոցներին:

Օլիմպիադայի կազմակերպման ողջ գործընթացը լուսաբանվել է մարզային ռադիոյի և հեռուստաընկերության կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԸ

Ազգանուն, անուն, հայրանուն	Ժառայողական 0-264
ԳՊՀ-ի կառավարման խորհրդի նախագահ Հակոբյան Հրանտ Խաչատուրի	2-38-03 2-57-75
ԳՊՀ ղեկավար Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	2-57-75 2-55-75 28-20-75
Ուս. գծով պրոռեկտոր Կարապետյան Վարազդատ Ազատի	2-38-03
Գիտ. գծով պրոռեկտոր Հայրապետյան Վարդան Ժորայի	2-36-51
Տնտ. գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	2-55-01
Բանասիրական ֆակուլտետի ղեկան Կատվայան Վիկտոր Լիպարիտի	2-45-24
Բնագիտական ֆակուլտետի ղեկան Ավագյան Մարտին Պատվականի	2-62-50
Հումանիտար ֆակուլտետի ղեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	2-70-09
Տնտեսագիտական ֆակուլտետի ղեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	2-36-51
Հեռակա ուսուցման ղեկան Կուտուզյան Նելլի Ալբերտի	2-84-54
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	2-61-15
Ուս. խորհրդի նախագահ Տերտերյան Վահե Ժորայի	2-70-09
Բանասիրական ֆակ-ի ղեկանի տեղակալ Բադալյան Մարինե Միքայելի	2-45-24
Տնտեսագիտական ֆակ-ի ղեկանի տեղակալ Հերզոյան Մարիամ Նորիկի	2-36-51
Հումանիտար ֆակ-ի ղեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վալդի	2-70-09
Բնագիտական ֆակ-ի ղեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վոլոդյայի	2-84-36
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	2-42-43
Ռեկտորի օգնական Մայիլյան Անուշ Տուրիկի	2-38-03
Հատուկ բաժնի պետ Ծատրյան Գավրուշա Գրիգորի	2-81-29
Գլխավոր ճարտարագետ Սիրունյան Լյովա Գուրգենի	2-81-02
Պահակապետ Զաքոյան Տարիել Հրաչիկի	2-84-41

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին

Բանասիրական ֆակուլտետ

Բնագիտական ֆակուլտետ.

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.

Տնտեսագիտական ֆակուլտետ.

Հեռակա ուսուցման ֆակուլտետ.

Ակադեմիական քաղաքականության վարչություն

ԳՊՀ գրադարան.

«Գավառի համալսարան» ուսումնական թերթ.

Միացյալ արհմիութենական կոմիտե.

Ուսանողական խորհուրդ.

ԳՊՀ Իրավաբանական կլինիկա

Նյութատեխնիկական բազա.

Համակարգչային տեխնիկայի շահագործման բաժին

ԳՊՀ հիշարժան միջոցառումներից

2008թ. աշակերտական օլիմպիադա

Հավելված.

Համակարգչային շարվածքը՝ Նուրե Դետրոսյանի